

քահանայից առանձին ուշադրութիւնը դարձնել իւրեանց հօտի բարոյական հոգատարութեան վերայ, եկեղեցիներում քարոզատութեանց ծրագիրն ընդարձակել, և որ աւելի գլխաւորն է, հսկել լուսերական հոգեւորականութեան վերայ և արգելուլ նոցա իւրեանց եկեղեցական քարոզութեանց մէջ քաղաքական հարցեր շոշափել, որը շատ անգամ թողյն են տալիս իրանց անելու նոցա քարոզիչները (пасторъ)։

Թող գեռ եւս մեր ազգայիններից ոմանք պարզամիտք հաւատան եւ պնդեն թէ՛ լուսերական քարոզիչների նպատակն է հոգւոյ փրկութիւն եւ բարոյական լուսաւորութիւն տարածել հայերի մէջ եւ ոչ քաղաքականութեան համար մարդօրսութեան պաշտօններ կատարել։

### Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Ք.

„Новое Время“ Ռուս օրաթերթը գրում է որ անուանի ծովագնաց Պոր-լոգփորսկին հնարել է օդաչու նաւ, որին կարողանում է ըստ կամի ուղղութիւն և ընթացք տալ ամենայն յաջողութեամբ։ Այս օդաչու նաւով նա մտադիր է ճանապարհորդութիւն անել հիւսիսային գոտւոյ վերայ։

Տերերի նահանգի նոգկաու գիւղում ներկայ ամի անցեալ Փետրվարի 26ին վախճանուել է Օսեդին Ասագէ Սոկայեվ անունով մի մարդ 150 տարեկան հասակում։ Այս ծերունին մինչև իւր մահուան նախընթաց շաբաթը պարապելիս է եղել իւր տնտեսական գործերով ամենայն ժրութեամբ։

„Московская вѣдомость“ Ռուս օրագրի մէջ կարդում ենք, որ Լազարեան ճեմարանի վերատեսուչ պ. Քանանեանցը իւր քննութեանն ու հետազօտութեանն է ենթարկել ճեմարանի մատենադարանում գտնուած մի հատ աղիւս, որը կրում է իւր վերայ Նաբուգոդոնոսորի մակագրութիւնը, Այդ աղիւսը ունի երկու և կէս վերջով երկայնութիւն և երեք վերջով լայնութիւն, և նորա վերայ կայ եօթն տող մակագրութիւն բարեխոնեան մակագրութեանց մէջ գործածուած հին նշանագրերով գրուած, որի բովանդակութիւնն է «Նաբուկոդոնոսոր—ուսուր թագաւոր Բաբելոնի, տիրող e—soq—tl (անուն Բաբելոնի բազմայարկ և սրածայր աշտարակի) և e—zi—da (անուն տաճարի, բառացի նշանակութեամբ՝ յաւիտենական տուն) արքայորդի Նաբու—պօլ—ուսարա (Նաբուպալասարայ) արքայի Բաբելոնի»։

Ս—շ—էէ էէ—ռէ լուսցքի սապնաջուրը մրգատու ծառերի, մարգերի և խաղողի որթերի (կուղբակ) պարարտացնող ամենալաւ միջոցն է։

Իդյսերի վերայ թափելով, սրսկելով այս սապնաջուրը կջարդենք,  
կփչացնենք նոցա վերայ գտնուած վնասակար միջատներին, խաղողի  
որթի վերայ թափելով կամ՝ սրսկելով կպահպանենք նորան հիւանդու-  
թիւնից: Միզի հետ խառնուած սապնաջուրը ամենապարարտացուցիչ  
միջոցն է բանջարանոցների:

ԲՐԻՅԱ (ЧАХОТКА) Դեռ ևս հին բժիշկները համոզուած էին որ բարակացաւ վարակիչ է. վերջերը այդ տեսութիւնը ոչնչացաւ. բայց անցեալ դարի կիսից սկսած՝ սկսան խիստ քննութեան ենթարկել սրա պատճառները գտնելու համար. որովհետեւ, մանաւանդ այդ ժամանակները՝ Եւրոպան չափազանց վարակուած էր այդ ախտով՝ ուստի կրկին հին բժիշկների կարծիքները վերականգնուեցան. Ինչպէս յայտնի է ուսոյցքների գոյութիւնը (бугорчатка) նրանով է բացատրուում, որ թոքերում գտնվում են bacillus ներ, որոնք մտնելով հիւանդի արեան մէջ՝ չափազանց շուտ և շատ բազմանում են, իսկ իւրեանց թիվեութեան պատճառով՝ դուրս են գալիս շնչառութեան ժամանակ թոքից և մշտնելով առողջ մարդի մէջ՝ նրան բարակացաւով վարակում են. Ուրեմն որքան պէտք է ուշադրութիւն դարձնել սորա վերայ՝ արդէն ինքնուտինքեան հասկանալի է լինում. Պէտք է հիւանդի համար ընդարձակ և միշտ մաքուր օդ մատակարարող սենեակ, որը վարակումից արգելում է. Հիւանդները չպէտք է միմեանց մօտ լինին. ամենախիստ մաքրութիւն և զգուշութիւն պէտք է պահպանել. նոյնպէս պէտք է այդ ախտով վարակուած կենդանեաց միսն ու կաթը գործածելուց զգուշանալ:

— ԳԻ — Երբիկ աղբ-բնուի-— Դի-նը. նա հիմնուած է 1621-ին, 1656-ին միայն 1000 հոգի բնակիչ ունէր. հարիւր տարի յետոյ (1756) այդ Թիւո մինչև 10,381-ի հասաւ. 1855-ին 629,810 հոգի էր. իսկ 1865-ին արգէն 1,003,250 հոգու հասաւ. Նոր հաշիւներից գուրս եկաւ՝ որ Նիւ — Եօր-կում 1,206,220 հոգի է. այնպէս որ այդ քաղաքի բնակիչների Թիւը լերջի 15 տարում բազմանում է 202,970 հոգւով. Նոյն այդ հաշուե-համարից երևում է որ. այնտեղ գտնուում են — բուն Ամերիկացի (սոցա հետ հաշուելով և 18,952 հոգի Նէգրներ.) 72,729 հոգի. Իր-լանդացի — 198,596. Գերմանացի — 153,482. Անգլիացի — 29,767. Իտա-լացի — 12,223. Ֆրանսացի 9,910 Պօլեակ — 9,020, Հօալանդացի — 8,683. և Ռուս — 4,551.

Ներկայ գրքին ու թե փրկւելու 1883 թու 1888 թուականն է: Մինչև  
ցայսօր ուսումնականները չեն կարողանում հաստատապէս ղեկել  
Քրիստոսի ծննդեան ճիշտ թուականը, և ուրիշ հիմնարկութեան 747:

կամ 749 և կամ 754 երորդ տարում եղաւ Քրիստոսի ծնունդը: Գիւն-  
խնի ուսուցչապետ (профессоръ) Զատլերը այս մասին հետազո-  
տութեան մի նոր տեսակ է առաջարկում: Այդ տեսակ հետազոտու-  
թիւնը հիմնուած նա Մեծ Հերովդէսի որդիներից մինի — Անտիպատոսի  
ժամանակուայ չորս հատ պղնձեայ դրամների ցուցմունքների վերայ:  
Զատլերը ապացուցանում է, որ Քրիստոսի ծննդեան իսկական տարին  
պէտքէ համարել Հռովմի հիմնարկութեան 749 երորդ և ոչ թէ 754 եր-  
րորդ տարին: Մատթէոս աւետարանչի վկայութեան համաձայն Յիսուս  
Քրիստոս ծնաւ մեծ Հերովդէսի կառավարութեան վերջին ժամանակը:  
Երբ որ այս հերովդէսը մեռաւ, Յիսուս դեռ մանուկ էր: Առկաս աւե-  
տարանչի վկայութեան համաձայն Քրիստոսի ծննդեան հետ միասին ե-  
ղաւ առաջին աշխարհագիրը Ասորւոց Սիւրենայ զատաւորութեան օրե-  
րում: Օգոստոս կայսեր հրամանաւ, Նոյն Աւետարանչի վկայութեան  
համաձայն Յովհաննէս Մկրտիչը իւր գործողութիւնն սկսեց Տիրերիոս  
կայսեր կառավարութեան տասն և հինգերորդ տարում: Լմիննոյն տա-  
րում մկրտեց Քրիստոսին: Աւերջապէս Առկասու աւետարանից յայտ-  
նի է, որ Քրիստոս մօտ երեսուն տարեկան էր, երբ նա սկսեց քարոզել  
Տիրերիոսի թագաւորութեան տասնևհինգերորդ տարում և Հերովդէսի  
տաճարը շինելու քառասուն և երեքերորդ տարում: Յառաջըրեալ  
վկայութիւններից առաջինը որ և է երկրայութեան չէ ննթարկուում:  
Եթէ Քրիստոս ծնաւ Հռովմի հիմնարկութեան 749 երորդ տարում և  
Մեծն Հերովդէս մեռաւ 750 երորդ տարում Պասեքից յառաջ, ուրեմն  
Քրիստոսի ծնունդը և Հերովդէսի կառավարութեան վերջը միաժամա-  
նակ են լինում:

Առաջին աշխարհագիրը (ժողովրդագրութիւնը) եղաւ Ասորւոց Սիւ-  
րենայ զատաւորութեան օրերում: Օգոստոս կայսրը իւր թագաւորու-  
թեան ժամանակամիջոցում երեք անգամ աշխարհագիր արեց, — առա-  
ջին՝ Հռովմի հիմնարկութեան 726, երկրորդ՝ 746 և երրորդ՝ 766 եր-  
րորդ տարում: Յուդայի ժողովրդագրութիւնը եղաւ Մեծն Հերովդէսի  
ժամանակ: Աւետարանիչը Սիւրենայ անունը տալիս է իրրեւ ժողովրդ-  
ագրութիւնը նորա ժամանակում եղած: Հետեւաբար Յուդայի ժողո-  
վրդագրութիւնը նշանակուած է 746 թուականին: Այս ժողովրդա-  
գրութիւնը, որ նշանակուած է 746 թուին, սկսուել է Յուդայի երկրի  
մէջ 747 թուին և հասել է Երուսաղէմին ոչ յառաջ քան 749 թուա-  
կանը: Աւետարանչի վկայութիւնը, որը վերաբերում է Տիրերիոսի իշ-  
խանութեան տասնևհինգերորդ տարւոյն նոյնպէս հաստատում է հարկի  
դահեկանի ցուցմունքով: Օգոստոս կայսրը մեռաւ 767 թուի օգոստոսի  
19 ին, բայց իւր մահից դեռ կէս տարի առաջ 766 թուի փետրվարին  
իրան իշխանակից նշանակեց Տիրերիոսին և այս ցուցման համաձայն  
Տիրերիոսի իշխանութեան տասնևհինգերորդ տարին եղաւ 780 թուի  
փետրվարը: Հէնց այս ժամանակն էլ Յովհաննէս Մկրտիչը սկսեց իւր

քարոզութիւնը, նոյնը հաստատուումէ զրամներով և աւետարանչի չորրորդ վկայութիւնով, Յիսուսը իւր Աստուածային գործողութեանց սկզբում 30 տարեկան 10 ամսական և 22 օրական էր, այսինքն մօտ երեսուն տարեկան, ինչպէս վկայումէ Ղուկասը, Այս սկզբնաւորութիւնը, ճշմարիտ է, եղաւ Տիրերիոսի կառավարութեան տասնէհինգերորդ տարում և Երուսաղեմի Տաճարի հիմնարկութեան քառասուն և վեցերորդ տարում, Տաճարի շինութիւնը սկսուել է Հոգովի Սինօղից Հերովդէսի կառավարիչ նշանակուելու տասնէութերորդ տարում և նորա Երուսաղեմին նուաճելու տասնէհինգերորդ տարում, որը եղաւ Հոգովի հիմնարկութեան 734 երորդ տարուայ հոկտեմբերին, Եթէ աւելացնենք սորա վերայ 46 տարի, կստանանք 780 թուականի վերջը, որը Քրիստոսի աստուածային գործողութեանց առաջին տարին է. իսկ հանելով 780 (779 տարի, 10 ամիս, և 17 օր) տարուց Յիսուսի 30 տարեկան, 10 ամսական և 22 օրական հասակը, կստանանք 748 տարի, 11 ամիս և 25 օր, այսինքն 749 թուականի դեկտեմբերի 25ը, սկսեալ Հոգովի հիմնարկութիւնից, Եթէ այս հաշիւը ճիշտ է, ուրեմն երեւումէ որ Քրիստոսի աստուածային գործողութիւնքը կատարուել են երկրիս վերայ մեր տարեթուի 31, 32, 33 և 34 տարիներում, Սորանից հետեւումէ որ Փրկչական թուականը պէտքէ սկսել մեր սկսածից հինգ տարի յառաջ, որով և ներկայ թուականը ո՛չ թէ 1883, այլ 1888ը կլինի:

— Ե՛կե՛ք— Ե՛կե՛ք — ինչպէս փորձերից երևում է, ելեկտրականութիւնը շատ լաւ ազդեցութիւն է անում գինու վրայ, նորա համը աւելի քաղցրացնելով և թեթեւացնելով. մանաւանդ այս նկատելի է կծու և խիստ թունդ գինիների վրայ. ելեկտրականութիւնը նոյն ազդեցութիւնն է անում դորա ջերայ, ինչ որ տաքացնելը, այսինքն նորան հնացնում է և աւելի մեղմացնում, յայտնի է որ ելեկտրականութիւնը գործածվում է և իբրեւ զտիչ միջոց ալկոհօլի վատ համի դէմ. շատ յաջող է համարվում այս տեսակ միջոցը...